ԿՐԹԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2024Թ. ԱՄՓՈՓՈՒՄ

Center For Educational Research & Consulting

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ համագործակցել ենք՝ աջակցելով հիմնադրամի շրջանավարտ դեսպանների շրջանում հարցումների իրականացմանը և արդյունքների վերլուծությանը:



Ստերլինգի համալսարանի (University of Stirling) հետ համագործակցությամբ իրականացրեցինք հետազոտություն ՀՀ երիտասարդների շրջանում՝ հասկանալու համար Հայաստանում ապրող երիտասարդների խնդիրները և ապագայի վերաբերյալ նրանց պատկերացումները:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի «Հայաստանում փախստականների ինտեգրացիայի խնդիրները և հնարավորությունները» ծրագրի շրջանակներում հետազոտության իրականացման ընթացքում տվյալների շտեմարանի պատրաստում և սոցիոլոգիական վերլուծական աշխատանքների իրականացում:

ԿՐԹԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ապրիլ ամսից սկսած իրականացրել ենք գործնական դասընթացների շարք Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի անձնակազմի համար՝ «Մշտադիտարկման ներածություն», «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն», «Տվյալների շտեմարանի կառուցում», «Հետազոտության գործիքակազմի մշակում» թեմաներով:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Երիտասարդության ուժը՝ երիտասարդական քաղաքականության մեջ» խորագրով ամառային դպրոցի շրջանակներում որպես մենթոր գործնական հանդիպում ենք վարել ՀՀ երիտասարդների մասնակցության, քաղաքացիական կրթության վերաբերյալ:

ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

2024թ. հունիսի 12-14 Ֆինլանդիայում տեղի ունեցավ Երիտասարդական հետազոտությունների սկանդինավյան 16-րդ սիմպոզիումը, որը կրում էր Երիտասարդությունը արդար աշխարհում խորագիրը (Youth in a Just and Fair World): Մեր կենտրոնը մասնակցեց այս կարևոր գիտական իրադարձությանը՝ ներկայացնելով ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՉԱՓՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ զեկույցը:

Նոյեմբերի 12-ին ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի 20 ամյակին նվիրված «Ժողովրդավարության ճոճանակը. ինքնության ճգնաժամ և արժեքների փոխակերպում» թեմայով միջազգային գիտաժողովին ներկայացրեցինք երկու զեկույց՝ «Արհեստական բանականության կիրառման մարտահրավերներն ու հնարավորությունները հասարակական կարծիքի ձևավորման համատեքստում» և «Երիտասարդության մասնակցության սոցիոլոգիական ըմբռնումը հետպատերազմյան Հայաստանում»:

ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

2024 թ. փետրվարի 22-29 ուսումնական այց կատարեցինք Ավստրիա: Այցի շրջանակներում հանդիպումներ ունեցանք Վիեննայում գործող «Երիտասարդական մշակույթի հետազոտությունների ինստիտուտում» (Institut für Jugendkulturforschung)՝ ծանոթանալով ինստիտուտի հետազոտական փորձին:

ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Galstyan, M. Conceptualizing and Measuring Economic and Social Aspects of Youth Independence in Armenia. Journal of Sociology: Bulletin of Yerevan University, 15(1 (39), 2024, 28–42.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ

Սեպտեմբերի 30-ին Երևանի պետական համալսարանում գործող Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում տեղի ունեցավ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի տնօրեն Մարինա Գալստյանի «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության հրապարակային պաշտպանությունը: Բարձագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024թ. դեկտեմբերի 3-ի 246-Ա հրամանով Մարինա Գալստյանին շնորհվել է սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄ

	Հանրային քննարկում հաղորդման շրջանակներում անդրադարձել ենք պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հիմնախնդիրներին:
	Տաղավարում Հովհաննես Երանյանի հետ հաղորդմանը քննարկել ենք երիտասարդների մասնակցության հիմնահարցերը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Նոյեմբերի 8-ին կնքեցինք համագործակցության հուշագիր Եվրասիա միջազգային համալսարանի հետ: Համագործակցության շրջանակներում Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը և Եվրասիա միջազգային համալսարանը նախատեսում են նպաստել ուսանողների և շրջանավարտների աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտություններով զինելուն, հետազոտությունների վրա հիմնված կրթության քաղաքականության զարգացմանը, միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրորակ հետազոտական նախագծերի շարունակական իրականացմանը, որակյալ առցանց կրթության հասանելիության ապահովմանը:	